ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 17-ԻՆ, ԽԱՉՎԵՐԱՑԻ ԿԻՐԱԿԻՆ, Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց հոգեշնորհ Տ. Մեսրոպ աբեղա Պալյանը, բնաբան ունենալով Խաչի շարականի հետևյալ խոսքերը. «Այսօր և մեք տօնեսցուք զնաւակատիս սուրբ Խաչին»։

***

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 26-ԻՆ, ԵՐԵՔՇԱԲԹԻ, Մայր Աթոռ ժամանեց Ռումինիայի և Բուլղարիայի թեմերի առաջնորդ հոգեշնորհ Տ. Տիրայր վարդապետ Մարտիկյանը, մասնակցելու Վեհափառ Հայրապետի գահակալության վեցերորդ տարեդարձի հանդիսություններին։

***

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 30-ԻՆ, ՇԱԲԱԹ, «տօն Սրբոյն Գէորգայ քաջամարտիկ զօրավարին, Ադոկտոսի և Ռոմանոսի երգեղոցին»։ Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Եղիշե աբեղա Գարաջյանը։

***

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, «տօն Վարագայ Սրբոյ Խաչի»։ Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Ներսես աբեղա Պողապալյանը։

***

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 3-ԻՆ, ԵՐԵՔՇԱԲԹԻ, հոգեշնորհ Տ. Մեսրոպ աբեղա Պալյանը ժամանակավորապես գործուղվեց Թբիլիսի, թեմական առաջնորդ սրբազանի հրավերով։

***

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 4-ԻՆ, ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, Մայր Աթոռ ժամանեց Հյուսիսային Ամերիկայի հայոց Արևելյան թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Սիոն արքեպիսկոպոս Մանուկյանը, մասնակցելու համար Վեհափառ Հայրապետի գահակալության վեցերորդ տարեդարձի և Մայր Աթոռի նոր տպարանի բացման հանդիսություններին, հանուն իր թեմի։ Սրբազանը օդանավակայանում դիմավորվեց Մայր Աթոռի միաբանների կողմից։ Նույն օրը Տ. Սիոն սրբազանը ներկայացավ Վեհափառ Հայրապետին և ջերմ զրույց ունեցավ Նորին Ս. Օծության հետ։

***

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 6-ԻՆ, ՈՒՐԲԱԹ, գերաշնորհ Տ. Սիոն արքեպիսկոպոս Մանուկյանի գլխավորությամբ, մեծ թվով ամերիկահայ ուխտավորներ Մայր Տաճարում իրենց ուխտը կատարելուց հետո, ներկայացան Վեհափառ Հայրապետին և ստացան նրա օրհնությունը։

***

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 7-ԻՆ, ՇԱԲԱԹ, որպես ուխտավոր և Վեհափառ Հայրապետի հյուր, Արգենտինայից Մայր Աթոռ ժամանեցին տեր և տիկին Վարդան և Զինա Բարակյանները։ Հյուրերը Մայր Տաճարում իրենց ուխտը և աղոթքը կատարելուց հետո, ներկայացան Վեհափառ Հայրապետին։

***

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 10-ԻՆ, ԵՐԵՔՇԱԲԹԻ, Մայր Աթոռում, Վեհափառ Հայրապետի նախագահության տակ և ներկայությամբ գերաշնորհ Տ. Սիոն արքեպիսկոպոս Մանուկյանի, գումարվեց Մայր Աթոռին կից ճարտարապետական հանձնաժողովի հերթական ժողովը, քննության առնելու համար Նյու-Յորքի հայոց Մայր Տաճարի շինության նախագիծը, որը Սիոն սրբազանի կողմից ներկայացվել էր Վեհափառ Հայրապետին, Հայաստանի ճարտարապետների կարծիքն առնելու համար։

***

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 11-ԻՆ, ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, Մայր Աթոռ ժամանեց Եթովպիայի հոգևոր հովիվ հոգեշնորհ Տ. Վաղգեն աբեղա Քեշիշյանը։ Օդանավակայանում դիմավորվեց հոգեշնորհ Տ. Ներսես աբեղա Պողապալյանի և բարե-

շնորհ Պետրոս սարկավագ Բերբերյանի կողմից։ Հայր սուրբը առաջնորդվեց Մայր Տաճար, ուր իր աղոթքը և ուխտը կատարելուց հետո, ներկայացավ Վեհափառ Հայրապետին։

***

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 13-ԻՆ, ՈՒՐԲԱԹ, Վրաստանի հայոց առաջնորդ գերաշնորհ Տ. Կոմիտաս եպիսկոպոս Տեր-Ստեփանյանը, թեմական խորհրդի անդամների ընկերակցությամբ, ժամանեց Մայր Աթոռ, մասնակցելու համար Ս. Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակի հոբելյանական հանդիսության։

***

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 16-ԻՆ, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, Հյուսիսային Ամերիկայի հայոց Արևելյան թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Սիոն արքեպիսկոպոս Մանուկյանի մեկնման առթիվ, Նորին Սրբության նախագահությամբ, տղաների ընդունելություն կազմակերպվեց Վեհարանի սեղանատանը, որին ներկա էին Մայր Աթոռի բոլոր միաբանները, տեր և տիկին Վարդան և Զինա Բարակյանները։ Ներկաներից շատերը ջերմ խոսքերով բարի ճանապարհ մաղթեցին սրբազանին։

***

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 17-ԻՆ, ԵՐԵՔՇԱԲԹԻ, գերաշնորհ Տ. Սիոն արքեպիսկոպոս Մանուկյանը, առավոտյան ժամը 9-ին, «Իլ—18» ինքնաթիռով թռավ Մոսկվա, իր թեմը վերադառնալու համար։ Սրբազան հորը ճանապարհեցին գերաշնորհ Տ. Սահակ և հայկազուն արքեպիսկոպոսները, հոգեշնորհ Տ. Ներսես արեղա Պոզապալյանը և բարեշնորհ Պետրոս սարկավագ Բերբերյանը։